

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՁԱՆԻ

2022 թվականի Դեկտեմբերի 29-ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍԻԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի դեկտեմբերի 29-ին ժամը 11:00-ին Փարաքար համայնքի ավագանու նստավայրում՝ գյուղ Փարաքար, Նաիրի փողոց 40 հասցեում տեղի ունեցավ Փարաքար համայնքի ավագանու արտահերթ նիստը, որին մասնակցում է Փարաքար համայնքի ավագանու 21 անդամներից 11-ը, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը: Փարաքար համայնքի ավագանու արտահերթ նիստը վարում է համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը: Նիստն արձանագրում է աշխատակազմի քարտուղար Գայանե Մանուկյանը:

Նախագահողը՝ համայնքի ղեկավարը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը:

Ավագանու անդամ Արաքսյա Վարդանյան առաջարկեց օրակարգից հանել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին հարցը, որը վերաբերում է Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղում գտնվող 0,1181 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի օտարմանը: Ավագանու 11 անդամները կողմ քվեարկեցին որ օրակարգը քննարկվի առանց այդ հարցի, դրանք են

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի՝ ՏԱՊ-ի հաստատման մասին

Զեկ.՝ Գ. Սարիբեկյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույթաչափերը սահմանելու մասին

Զեկ.՝ Գ. Սարիբեկյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում 2023 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին

Զեկ.՝ Գ. Սարիբեկյան

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով բնակիչներին դրամական օգնություն տրամադրելու մասին

Զեկ.՝ Կ.Արթենյան

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով բնակչի ուսման վարձի մասնակի հատուցման մասին

Զեկ.՝ Կ.Արթենյան

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Զեկ.՝ Գ. Սարիբեկյան

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 64-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչելու մասին

Զեկ.՝ Գ. Սարիբեկյան

8. Համայնքի սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

Զեկ.՝ Գ. Սարիբեկյան

9. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին

Զեկ.՝ Գ. Սարիբեկյան

10. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին
Ձեկ.՝ Գ. Սարիբեկյան

11. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին
Ձեկ.՝ Գ. Սարիբեկյան

12. Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու և
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի
հոկտեմբերի 18-ի թիվ 86-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
Ձեկ.՝ Գ. Սարիբեկյան

13. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի
աշխատակազմի համայնքային ծառայողի զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխան
դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի կիրառման
կարգը եվ չափը սահմանելու մասին

Ձեկ.՝ Ք.Մելքոնյան

14. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու առաջին
նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանելու մասին
Ձեկ.՝ Դ.Մինասյան

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Նիստը վարողն առաջարկեց հայտարարել 30 րոպե ընդմիջում որոշակի հարցեր քննարկելու համար.
Առաջարկվեց դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Ընդմիջումից հետո նիստը շարունակվեց,

Ավագանու անդամներն ընդմիջման ընթացքում առաջարկել են Փարաքար համայնքի 2022 թվականի
դրությամբ մարտական գործողությունների ժամանակ վիրավորում ստացած և զոհված զինծառայողի
ընտանիքիներին դրամական աջակցություն տրամադրել, որն ավագանու անդամների կողմից ընդունվել
է միաձայն:

Օրակարգի 1-ին հարցը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023
թվականի տարեկան աշխատանքային պլանի՝ ՏԱՊ -ի՝ հաստատման որոշման նախագիծը ներկայացրեց
համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը.

Նշեց, որ ՏԱՊ-ը, որը որոշման հավելվածն է տեղադրված է եղել կայքում , տրամադրվել է ավագանու
անդամներին, բոլորը ծանոթ են

Քննարկվող նախագծի վերաբերյալ այլ հարցեր չեղան:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի
վարչական տարածքում 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափեր
հաստատելու մասին որոշման նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ

Սարիբեկյանը, նշելով որ որոշման անբաժանելի մաս կազմող հավելվածները ներկայացված են եղել, որոնք ուղարկված են եղել նաև ԱՆ փորձաքննության համար , որտեղից ստացվել է N /27.3/55764-2022 գրությունը և պետական փորձագիտական եզրակացությունը, առաջարկեց հաստատել Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը,

Քննարկվող նախագծի վերաբերյալ այլ հարցեր չեղան:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում 2023 թվականի տեղական վճարների գծով արտոնությունները սահմանելու մասին որոշման նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը. Նշեց, որ այս որոշման նախագիծը ևս ուղարկվել է ԱՆ փորձաքննության համար, որտեղից ստացվել է N /27.3/55764-2022 գրությունը և պետական փորձագիտական եզրակացությունը, նշելով որ որոշման անբաժանելի մաս կազմող հավելվածը ներկայացված է եղել:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով բնակիչներին դրամական օգնություն տրամադրելու մասին, զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Կարապետ Արթենյանը, նշելով որ բոլոր դիմումատուներին այցելել են, որի հիման վրա համայնքապետարանի սոցիալական հանձնաժողովը 2022 թվականի դեկտեմբերի 2-ին և 19-ին կազմել են թիվ 4 և 5 արձանագրությունները: Նախատեսվում է թվով 65 ընտանիքի ցուցաբերել 2 739 000 ՀՀ դրամ օգնություն՝ համաձայն որոշման հավելված կազմող ցուցակի:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝ որոշման նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Կարապետ Արթենյանը, առաջարկեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի բնակիչ Բրյուսովի անվան պետական համալսարանի <<Թարգմանչական գործ /չինարեն- հայերեն/ մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Վերա Նվերի Առաքելյանին տրամադրել մասնակի ուսման վարձավճարի հատուցում 82 500 (ութսուններկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝ որոշման նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը, նշեց որ ղեկավարվել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք է ընդունվել 2022 թվականի դեկտեմբերի 6-ին տրված N 269 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, առաջարկեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0409-0026 կադաստրային ծածկագրով 0,0948 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ հետագայում պտուղ-բանջարեղենի վերամշակող տնտեսություն կառուցելու համար:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 7-րդ հարցը՝ որոշման նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը, նշեց, որ ղեկավարվելով են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով.առաջարկում է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022թվականի հոկտեմբերի 18-ի «Մի շարք ոչ առևտրային կազմակերպություններ և միացյալ տնօրինություններ լուծարելու մասին» թիվ 64-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն.
- 1) Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.
«Հաշվառումից հանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի «Մշակույթ» միացյալ տնօրինությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, 378350, Արմավիրի մարզ, գյուղ Բաղրամյան, գրանցման համարը՝ 99.180.01340)»:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի «Մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ և միացյալ տնօրինություններ լուծարելու մասին» թիվ 64-Ա որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետը:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության, հարցեր չեղան զեկուցողին
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 8-րդ հարցը՝ Համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին որոշման նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը, նշեց որ ղեկավարվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-689-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ հավելվածով, հիմք է ընդունել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մշակույթի և երիտասարդության պալատ»

ՀՈԱԿ տնօրենի Ժ/Պ Ա. Նիգոյանի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 3210 զեկուցագիրը. Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող
 - 1) Նորակերտ բնակավայր, Կոմիտասի փողոց 47 հասցեում գտնվող՝ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական՝ 08102013-04-0034, տրված՝ 2013 թվականի հոկտեմբերի 8-ին/ 787.5 քմ մակերեսով մշակույթի տունը՝ 04-074-0018-0028-001 ծածկագրով, 71.0 քմ մակերեսով հարթակը՝ 04-074-0018-0028-002 կադաստրային ծածկագրով, դրանց զբաղեցրած և օգտագործման համար անհրաժեշտ 0,1205 հա մակերեսով՝ 04-074-0018-0028 կադաստրային ծածկագրով, բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն /այսուհետ՝ Գույք/.
 - 2) Արևաշատ բնակավայր, Երևանյան խճուղի 16 հասցեում գտնվող՝ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական՝ 26122018-04-0034, տրված՝ 2018 թվականի դեկտեմբերի 26-ին/ 1600.2 քմ մակերեսով մշակույթի տունը՝ 04-026-0019-0001-001 կադաստրային ծածկագրով, դրա զբաղեցրած և օգտագործման համար անհրաժեշտ 0,1153 հա մակերեսով՝ 04-026-0019-0001 կադաստրային ծածկագրով, բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն /այսուհետ՝ Գույք/.
 - 3) Փարաքար բնակավայր, Նաիրի փողոց 40 հասցեում գտնվող՝ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական՝ 2542293, տրված՝ 2008 թվականի հունիսի 3-ին/ 1102.2 քմ ներքին մակերեսով, 1402.2 քմ արտաքին մակերեսով մշակույթի տունը՝ 024-009-001 կադաստրային ծածկագրով, դրա զբաղեցրած և օգտագործման համար անհրաժեշտ 0,747 հա մակերեսով՝ 04-094-024-009 կադաստրային ծածկագրով, բնակավայրի նպատակային նշանակության հողամասն /այսուհետ՝ Գույք/.
 - 4) Մերձավան բնակավայր, Երիտասարդության փողոց թիվ 39 հասցեում գտնվող՝ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական՝ 20092022-04-0087, տրված՝ 2022 թվականի հոկտեմբերի 20-ին/ 1845.8 քմ մակերեսով մշակույթի տունը՝ 04-065-0063-0007-001 ծածկագրով, 4.6 քմ մակերեսով զուգարանը՝ 04-065-0063-0007-002 ծածկագրով, 8.3 քմ մակերեսով ծածկը՝ 04-065-0063-0007-003 կադաստրային ծածկագրով, դրանց զբաղեցրած և օգտագործման համար անհրաժեշտ 1.8342 հա մակերեսով՝ 04-065-0063-0007 կադաստրային ծածկագրով, բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն /այսուհետ՝ Գույք/.
 - 5) Թաիրով բնակավայր, Մայրաքաղաքային փողոց թիվ 106 հասցեում գտնվող՝ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական՝ 07022020-04-0052, տրված՝ 2020 թվականի փետրվարի 7-ին/ 202.5 քմ մակերեսով մշակույթի տունը՝ 04-094-0085-0011-001 կադաստրային ծածկագրով, 6.6 քմ մակերեսով օժանդակ շինությունը՝ 04-094-0085-0011-002 ծածկագրով, դրանց զբաղեցրած և օգտագործման համար անհրաժեշտ 0.0737 հա մակերեսով՝ 04-094-0085-0011 կադաստրային ծածկագրով, բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն /այսուհետ՝ Գույք/.
 - 6) Այգեկ բնակավայր, 6-րդ փողոց 2 հասցեում գտնվող՝ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական՝ 05122013, տրված՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին/ 231.5 քմ մակերեսով մշակույթի տունը՝ 04-009-0010-0004-001 կադաստրային ծածկագրով, դրա զբաղեցրած և օգտագործման համար անհրաժեշտ 0,043 հա մակերեսով՝ 04-009-0010-0004 կադաստրային ծածկագրով, բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն /այսուհետ՝ Գույք/.
 - 7) Բաղրամյան բնակավայր, Շինարարների փողոց, թիվ 47 հասցեում գտնվող՝ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական՝ 2657881, տրված՝ 2011 թվականի հունիսի 1-ին/ 893.5 քմ ներքին մակերեսով, 1133.0 քմ արտաքին մակերեսով մշակույթի տունը՝ 04-030-0023-0012-001 կադաստրային ծածկագրով, դրա զբաղեցրած և օգտագործման համար անհրաժեշտ 0,1796 հա մակերեսով՝ 04-030-0023-0012 կադաստրային ծածկագրով, բնակավայրի նպատակային նշանակության հողամասն /այսուհետ՝ Գույք/.
- անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ տրամադրել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մշակույթի և երիտասարդության պալատ» ՀՈԱԿ-ին:

Չեկուցողին հարցեր չեղան
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 9-րդ հարցը՝ Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեակալ Գոռ Սարիբեկյանը, նշեց որ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով՝ առաջարկում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական՝ 01122022-04-0024, տրված՝ 2022 թվականի դեկտեմբերի 1-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Փարաքար գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից՝ 04-094-0409-0007 կադաստրային ծածկագրով, 0.05883 հա մակերեսով այլ հողատեսք /0.054980 հա վարելահող, 0.003850 հա այլ հողատեսք/ գործառնական նշանակության հողամասն օտարել աճուրդային եղանակով:
2. Աճուրդի մեկնարկային գին սահմանել ընդհանուր՝ 4 000 000 /չորս միլիոն / ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 10-րդ հարցը՝ Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեակալ Գոռ Սարիբեկյանը, նշեց որ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով՝ առաջարկվում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 16122022-04-0081, տրված՝ 2022 թվականի դեկտեմբերի 16-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի Նորակերտ գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից՝ 04-074-0123-0244 կադաստրային ծածկագրով, 0.3465 հա մակերեսով վարելահող գործառնական նշանակության հողամասն օտարել աճուրդային եղանակով, գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով:
2. Աճուրդի մեկնարկային գին սահմանել ընդհանուր՝ 3000 000 /երեք միլիոն/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամ Գևորգ Խաչատրյանը հետաքրքրվեց հողի գտնվելու վայրի մասին, առաջարկեց մեկնարկային գնի հետ կապված հարցի քննարկումը թողնել վերջում, հողամասը գտնվում է ջրանցքի հարևանությամբ, պարզաբանեց Գ. Սարիբեկյանը:

Օրակարգի 11-րդ հարցը՝ Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը, նշեց որ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով՝ առաջարկվում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 08122022-04-0072, տրված՝ 2022 թվականի դեկտեմբերի 8-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի Պտղունք գյուղի, Երևան-Վաղարշապատ խճուղի 64/1 հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության, 04-082-0063-0123 կադաստրային ծածկագրով, 0.0108 հա մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն օտարել աճուրդային եղանակով, մեկ հարկանի առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:
2. Աճուրդի մեկնարկային գին սահմանել ընդհանուր՝ 1 300 000 /մեկ միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Օրակարգի 12-րդ հարցը՝ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվահանի հոկտեմբերի 18-ի թիվ 86-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը, նշեց որ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով՝ առաջարկվում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական՝ 08122022-04-0098, տրված՝ 2022թ. դեկտեմբերի 8-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Մուսալեռ գյուղի Երևանյան փողոց 9/2 հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 04-069-0101-0081 կադաստրային ծածկագրով, 0,0152 հա մակերեսով հողամասն օտարել աճուրդային եղանակով, որից 121.6 քմ մակերեսով հողամասը մեկ հարկանի շինություն՝ առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու, 30.4քմ մակերեսով հողամասը՝ սպասարկման նպատակով:
2. Աճուրդի մեկնարկային գին սահմանել 1 800 000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի «Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին» թիվ 86-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ձեկուցողին հարցեր չեղան

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Օրակարգի 13-րդ հարցը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխան դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի կիրառման կարգը և չափը սահմանելու մասին որոշման նախագիծը ներկայացրեց Կարապետ Արթենյանը, նշեց, որ ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով. *Առաջարկվում է*

1. Սահմանել, որ.

1) Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողին յուրաքանչյուր ամիս տրվում է հավելավճար՝ նրա պաշտոնային դրույքաչափի հինգ տոկոսի չափով:

2) Համայնքային ծառայողին տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան շնորհելու դեպքում համայնքային ծառայողին յուրաքանչյուր ամիս տրվում է սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված չափով հավելավճար՝ այդ իրավունքի ծագմանը հաջորդող ամսվա 1-ից:

2.Սույն որոշման գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա:

Տիկին Ա. Վարդանյանի հարցին, թե ունե՞ն նման համայնքային ծառայող , պարոն Արթենյանը պատասխանեց, որ Հարություն Նազարեթյանն է:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Օրակարգի 10-րդ հարցը՝ Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին, որոշման նախագիծը նորից դրվեց քվեարկության, ներկայացրեց համայնքի ղեկավարի տեակալ Գոռ Սարիբեկյանը, նշեց որ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով՝ առաջարկվում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 16122022-04-0081, տրված՝ 2022 թվականի դեկտեմբերի 16-ին/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի Նորակերտ գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից՝ 04-074-0123-0244 կադաստրային ծածկագրով, 0.3465 հա մակերեսով վարելահող գործառնական նշանակության հողամասն օտարել աճուրդային եղանակով, գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով:

2. Աճուրդի մեկնարկային գին սահմանել ընդհանուր՝ 3000 000 /երեք միլիոն/ ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 0, դեմ – 6, ձեռնպահ - 5

Որոշումը չընդունվեց :

Օրակարգի 14-րդ հարցը, որոշման նախագիծը ներկայացրեց Դ.Մինասյանը, առաջարկելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2023 թվականի փետրվարի 14-ին, ժամը 14:00-ին :

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Ավագանու անդամներն առաջարկեցին Փարաքար համայնքի 2022 թվականի դրությամբ մարտական գործողությունների ժամանակ վիրավորում ստացած և զոհված զինծառայողի ընտանիքին դրամական աջակցություն տրամադրել, որն ավագանու անդամների կողմից ընդունվեց միաձայն ծ:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո ավագանու նիստը հայտարարվեց փակված: